## 176. ԹԱՔԱՎՈՐԻ ԲԱՂԻ ՀԵՔԻԱԹԸ

*Լըմ ա լըմ չի, մի շատ հարուստ թաքավոր ա լըմ։ Էս թաքա-վորը իրեք էլ տղա ա ունենըմ. Երկուսը խելոք են լըմ, մինը մի քիչ խելըիցը թեթև ա լըմ ու անըմն էլ Դալի-Հոլո ա ըլըմ։*

*Մի օր էս թաքավորը իրան տղերանցը ասըմ ա. «Ա՛յ որթիք, ասծո տված ամեն պանիցն էլ ունեմ ես, փառք ասծու, իմ հարըս-տութենի ու փոլըաթի ծենը աշխարքիս էն ծերն ա հասել. մենակ մի բաղ չունեմ, որ ես իմ բաղի բարիցը ուտեմ, սիրտս հովանա. Գնացեք, ինչ որ ա մի բաղ բըցեք»։*

*Էս թաքավորի տղերը վեր են կենըմ ու ընկնըմ հոր խաթեր մի բաղ են բըցըմ ու սկըսըմ են լավ բեջարել։ Սրանից հետո մի իրեք տարի էլ չի անց կենըմ, ահանց էս բըցած բաղը կյալիս ա նհենց լավ տուս ա կյալի, որ էլ բեկի պտուն չի մնըմ պակաս. ծառերը լավ բար են տալի, վազները լավ բոլ հաղող են փռնըմ։*

*Բաղը հասնըմ ա. բաղերու վախտը մոտեցած ա ըըմ, ճանփա պահելիս են լըմ, թե հա սոր ա էլուց ա թաքավորը կկյա՛ իրան ծեռովը, իրան սրտի ուզածի ղայտի բաղի բարիցը կըտաղի, որ հավ էլ իրանք բդարաղ անեն։*

*Թաքավորի պատճառը ոդեն. ինչ որ խելըիցը մի քիչ թեթև ա լըմ՝ Դալի-Հոլոն, իրան մենծ կյուրզը ծեռին բշեր-ցերեկ էս բա-ղին ղարավըլըուղին անելիս ա լըմ։ Թաքավորի հետ կյալու վախ-տը, մի օր ոտ աենըմ ա ըեսի մի պառավ էկավ բաղի կշտին կաղ-նեցը։*

*Սա սրան հըրցնըմ ա. «Ի՞նչ ես ուզըմ»։ Պառավը ասըմ ա. թե. «Քու ասածը կըտես, մի ճիթ հաղող տու՛ ուտեմ»։*

Դալի-Հոլոն էս որ մ̈անըմ ա, չոմբախը քաշըմ ա, էս պռավին վրա ա քշըմ, թե տա, վե քցի, ասըմ ա. «Քավթառ իմանըրզ, իմ հերը դեռ հլ̈ամ էս բաղի բարիցը քաղել չի, մի չուշտ դու ես էկել. խաղող ուղը՞մ»։ Էս պառավը հիլ ա անըմ փախչըմ ա ու անըծըմ ա, ասըմ ա. «Ա՛յ որթի, ասծանե խնթրում եմ, բալքի սամվելա քամին կյ̈ա քու բաղը նհենց սրփի տանի, նհենց չորացնի, որ տեղը մի կանաչ էլա մնա ոչ»։ Սրա ասելն ու մի փիս հանքսըրզ քամի վեր կենալը մին չի՜ ըլըմ։

Էս Դալի-Հոլոն ետ ա տ̈առնըմ, մտիկ անըմ տենըմ, որ ղորթ որ իրանց բաղը նհենց չորացա՜վ, նհենց չորացա՜վ, որ մի կանանչ էլա չմնաց։ Դրանից ետը պառավը ասըմ ա. «Ջեր բաղը չի կնանչի, հեչկել որ Ջաղի բլբուլը չպիրեք»։

Էս Դալի-Հոլոն վեր ա կենըմ կյ̈ալիս ախպորտանցը. հորը ասըմ ա. «Բա սհե՛, սհե՛ մի օյին էկավ կըլխիս. բաղը պռավի անեծքից չորացավ, պառավը ասեց. «Հեչկելանը Ջաղի բլբուլը չպիբեք, չի կնանչի...»։

Էս Դալի-Հոլոի ախպերտինքը տենըմ են, որ իլլաչ չկա, վի են կենըմ ծիանը թամքըմ են, նի են ըլըմ ասըմ են. «Քյն̈անք ման կյ̈անք, բալքի Ջաղի բլբուլը կրանանք քթնենք, պերենք, որ բաղը կնանչի»։

Էս Դալի-Հոլոն ախպորտանցը ասըմ ա. «Ինձ էլ հետներդ տարեք, ես էլ եմ կյ̈ալի»։ Թե նրա հերը, թե ախպերտինքը, սրան ասըմ են. «Սաքսա՛ղ, դու կյ̈ալիս ես՝ ի՞նչ անես, կյ̈ալիս ես թե կլխընուս խաթաբալա տ̈առնաս, կքյն̈աս մի կեղըմ կկորչես, կմընանք արին-պարտքի տակի։ Տանը վեր ընկի, կացի հիչկնլանը մենք ետ կկյ̈անք»։

Սհանք վեր են կենըմ, քյնըմ են դպա Ջաղի բլբուլը, էս Դալի-Հոլոն էլ իրան չոմբախը վի ա կալնըմ, քյնըմ ման կյ̈ալու։ Ման կյ̈ալիս սա էս քարին ա չոմբախով տալի, էն քարին ա տալի. մթամ թե խաղ ա անըմ։ Մնէլ էն ա տենըմ ըեսի մի քար շուռ հըրնցավ, քարի տակին էլ մի ծակ պ̈աց լ̈ավ։ Սա նի ա մտնըմ էս ծակը, մի քիչ քյն̈ում ա, մնէլ տենըմ ա ըեսի ծակի միչին մի հլիվոր մարդ նստած. «Բարի աչողում բիձա»։ «Աստու պ̈արին որթի» ասելուց ետը, էս Դալին սրան հրցնըմ ա. «Ի՞նչ մարդ ես, ի՞նչի ես նստել ըստի»։

Սա ասըմ ա. «Ես էս տափի տակի թաքավորի Հրեղեն ձիանոնց ղրավուլն եմ»։ Սա ըստի սրան մուննաթ ա անըմ, խնթրվում ա։ Էս հայը սրան տանըմ ա ծիանոնց կյ̈ոմը, սրան շհանց ա տա-

լի։ Սա նի ա մտնըմ էս կյոմը, տենըմ ա ըեսի քառասուն հատ Հրեղէն ձիան կապած, Հնդստանի խուրմեն աղաքներում լիքը խուրմա են ուտըմ։

Սա քյնըմ ա, ձեռը անըմ ա՝ չիմ էլ մեջքներնուն կռացնըմ են. վերչը մենակ մի սիպտակ ձի մեջքը կռացրնըմ չի. սհաթը սա էս սիպտակ ձին թամքըմ ա, նի ա լըմ, կյալիս ա հորը ասըմ ա. «Սս էլ եմ ախպորտանց ետնա քյնըմ»։

Հերը սրան հիլ չի անըմ, սա կնրդվում ա ու ձին քշըմ ա. սհենց թռած կյալիս ա ախպորտանց ետնա հասնըմ ա, ախպէրտինքը սրան տեհնալուն հատաղ մրնմ են սառած կաղնած։ Ախպորտանցը ասըմ ա. «Ի՞նչ եք ռեխներըդ պա̈ց արել, մնացել կաղնած, էկեք քյնա̈նք»։

Սհանք քյնում են, քյնում են, քյնում են, իրեք ճանփի ռաստ են կյա̈լի, մեջտեղն էլ մի հլիվոր նստած ա լըմ։ էս հլիվորին հրցրնըմ են, թե՝ սա ի՞նչ ճանփեք ա, սա ասըմ ա. «էս մինը էն ճանփեն ա, որ քյնա̈ցողը ետ կկյա̈. էս մինն էլ էն ա, որ քյնա̈ցողը գյա̈ ետ կկյա̈, գյա̈՝ չէ. էս մինն էլ էն ա, որ քյնա̈ցողը ըսկի ետ չի կյա̈լ»։

էս Դալի-Հոլոն ախպորտանց մնին մի ճանփովն ա ղարկում, մնին էլ՝ մնովը, ինքն էլ ընկնըմ ա էն ճանփեն, ինչ որ քյնա̈ցողը ըսկի ետ չի կյա̈լ, ու քյնըմ ա։ Ախպորտանցըն էլ ասած ա լըմ, որ մեղանից ով որ էլ թեզ ետ տա̈ռնա կյա̈, էս ճանփի ըռխըմը նստի՝ հըկկեյանք իրեքս էլ ետ տա̈ռնանք ու իրար հետ քյնա̈նք։

Սրա ախպերտինքը հըլա հիլ աննենք իրանց ճանփեն քյնան, մենք էս Դալի-Հոլոի ետնա քյնա̈նք, տեհնանք որդի տի քյնա̈լ։

Սա քյնըմ ա, քյնըմ ա, շատն ու քիչն էլ աստոծ ա խարար, քյնըմ մի ծորում մի սիպտակ ըմարաթի ա ռաստ կյա̈լի, մտիկ ա անըմ տենըմ, որ էս ըմարաթի ղատերը՝ ինչ կա-չկա, չիմ նհենց սիպտակ ա, նհենց սիպտակ ա, որ կասենաս, թե սիպտակ ծին լի։ Սա քյնըմ ա ծիուցը վեր կյալի, ծին ըստի կապըմ ա...[1]

[1] Դրանման ձեռագիրն ընդհատված է, թերավարտ է (Ս. Կ.)։